

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԹԱՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

### ՔՐԻՍՏԻՆԵ ՏԱՆԱԶՅԱՆ

Արդի հասարակություններում և հատկապես անցումային-փոխակերպվող երկրներում սոցիալական կապիտալի, նրա ձևավորման ու զործառնության առանձնահատկությունների հիմնախնդիրն ունի տեսական և գործնական մեծ նշանակություն: Բանն այն է, որ ժամանակակից աշխարհում այս կամ այն երկրի մրցունակությունը, քաղաքակրթական մարտահրավերներին պատասխանելու ունակությունը պայմանավորված են ոչ միայն տնտեսական հնարավորություններով, այլև սոցիալական հարաբերությունների բնույթով: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մրցունակ են այն հասարակությունները, որոնց ներազգային և ներխմբային կապերի ու հարաբերությունների հիմքում ընկած է վստահությունը: Վերջինս հասարակության համար յուրօրինակ կապիտալի հիմնաքար է:

Նշանավոր փիլիսոփա և սոցիոլոգ Պիեր Բուրդյեն առանձնացնում է կապիտալի երեք դրսևորում՝ տնտեսական, մշակութային և սոցիալական<sup>1</sup>: Սոցիալական կապիտալի վերաբերյալ կան հետևյալ տեսական մոտեցումները՝

- ցանցային, որը սոցիալական կապիտալը դիտարկում է սոցիալական կապերի, հարաբերությունների ցանցի կառուցվածքի տեսանկյունից: Տվյալ կառուցվածքի հատկությունը մասնակիցներին բարիքով ապահովելու ունակությունն է<sup>2</sup>,

- կոմունիտար, որի կենտրոնական գաղափարը վստահության հիման վրա առաջացած հանրույթի միասնությունն է<sup>3</sup>,

- ինստիտուցիոնալ. համաձայն այս մոտեցման՝ սոցիալական կապիտալը դիտարկվում է որպես հասարակական վստահություն առաջացնող սոցիալական ինստիտուտների կատարած զործառնության արդյունք,

- սիներգետիկ. կոմունիտար և ինստիտուցիոնալ մոտեցումների համադրությունն է: Այս մոտեցումը շեշտադրում է սոցիալական կապիտալի արարման աղբյուրները՝ մասնավորապես առանցքավորվելով պետության ինստիտուտի և քաղաքացիական ակտիվության հարցերի շուրջ<sup>4</sup>:

Սոցիալ - փիլիսոփայական դիտանկյունից սոցիալական կապիտալը կոնկրետ պատմական ժամանակահատվածում հասարակական փոխհարաբերությունների ցանցի ինստիտուտավորման հիման վրա առաջացած

<sup>1</sup> Տե՛ս **Бурдье П.** Формы капитала // «Экономическая социология», 2002, № 5, էջ 60-74:

<sup>2</sup> Տե՛ս **Burt R.** Structural holes: The Social structure of Competition. 1992, էջ 45:

<sup>3</sup> Տե՛ս **Woolcock M., Narayan D.**, Social Capital: Implications for Development Theory, Research and Policy // The World Bank, Research Observer. Vol. 15, № 2, August 2000, էջ 229-230:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 229-230:

Ներուժային ռեսուրս է, որը նպաստում է հասարակական համակարգի լավագույն տարբերակի լինելիությանը: Ի տարբերություն կապիտալի մյուս տեսակների՝ սոցիալական կապիտալը դերակատարների և նրանց միջև հարաբերությունների կառուցվածք է: Այն տնտեսական կապիտալի նման ժառանգաբար չի փոխանցվում: Սոցիալական կապիտալն անհնար է ակնթարթորեն ձեռք բերել կամ կեղծել, քանզի ունի նաև վարքաբանական կողմ, այսինքն՝ կապված է կոնկրետ հանրույթի փոխհարաբերությունների նորմերին հարմարվելու հետ: Սոցիալական կապիտալի կուտակելիությունը մեծապես կախված է ոչ թե անհատի անձնային բնութագրիչներից, այլ այն հարաբերությունների ցանցից, որում ներառված է տվյալ անհատը: Եթե ֆիզիկական կապիտալն ամբողջությամբ շոշափելի է (մարմնավորված է տեսանելի նյութական ձևերում), իսկ մարդկային կապիտալը շոշափելի է մասնակի չափերով (անհատի հմտությունների և գիտելիքների ձևով), ապա սոցիալական կապիտալն անհամեմատ քիչ շոշափելի է, քանի որ այն առկա է միայն միջանձնային հարաբերություններում: Սոցիալական կապիտալը շահութաբեր է միայն այն դեպքում, երբ փոխանակման պայմաններում գտնվում է ակտիվ գործածության մեջ՝ ներքնայնացման և արտաքնայնացման համամասնական հերթափոխմամբ: Անգամ միևնույն տնտեսական կապերի դեպքում տարբեր անհատներ, պայմանավորված այն բանով, թե որքանով են կարողանում սոցիալական կապիտալի հաշվին խմբում ապահովել շարժունություն, ունենում են տարբեր եկամուտներ:

Մանրակրկիտ վերլուծության ենթարկելով սոցիալական կապիտալի առանձնահատկությունները՝ պարզ է դառնում, որ սոցիալական կապիտալը, գործածելով կապիտալի մյուս տեսակների հիմնարար ներուժը, նպաստում է արդի պայմաններում սոցիալական վթարների հաղթահարմանը կամ կանխարգելմանը:

Սոցիոմշակութային վթարը սոցիալական, մշակութային պահանջ-մուկների և դրանց բավարարման աղբյուրների անհամապատասխանության պայմաններում առաջացած բախումնային իրավիճակ է: Վթարը ենթադրում է երկարատև ապակառուցողական, ախտաբանական նշանակություն ունեցող ազդեցություն սոցիալական կառուցվածքի կամ տարրի վրա<sup>5</sup>: Հին և նոր սոցիոմշակութային դաշտերի միաժամանակյա գործառնման դեպքում նոր և հին ռիթմերի միջև ազդեցիվ կողմնորոշումները հնարավորություն չեն տալիս անձի սոցիալական ակտիվությունը լիարժեք դրսևորելու: Հասարակության ոչ բոլոր սոցիալական խմբերն ու շերտերն են նույն չափով ընկալունակ միևնույն վթարի հանդեպ: Այլ կերպ ասած՝ որոշ սոցիալական խմբեր՝ կախված սոցիալ-մշակութային դիրքից, դժվարությամբ կամ հեշտությամբ են հաղթահարում վթարը, որոշների համար սոցիալական նույն վթարը մեկնաբանվում է որպես նվազ սպառնալի, մյուսների համար՝ որպես ապակայունացնող և այլն: Հետխորհրդային հասարակության մեջ առաջացած վթարային միջավայրը և վթարներին դիմակայելու սոցիալական շերտերի այլազան արձագանքներն ապահովեցին մեզ համար սոցիալական փորձ: Սոցիալական տվյալ փորձառությունը ցույց տվեց, որ

<sup>5</sup> Տե՛ս **Штомпка П.** Социальное изменение как травма // «Социологические исследования», 2001, № 1, էջ 6-16:

մարդիկ, ովքեր տիրապետում էին տնտեսական բավարար կապիտալի, սակայն օժտված չէին համապատասխան սոցիալական և մշակութային ներուժով, կանգնեցին սոցիալական կարգավիճակի կորստի առջև: Այստեղից հետևում է, որ սոցիալական կապիտալի բավարար մակարդակը թույլ է տալիս փոփոխությունների ռացիոնալ և իռացիոնալ կողմերի հանդեպ լինել ավելի զգայուն, գնահատել վթարային իրավիճակը, վերլուծել այն և ակտիվորեն դիմակայել:

Ակներև է, որ մեր կողմից որպես վթար որակվող երևույթն առաջացնում է պատասխան վերաբերմունք: Այդպիսին է իրավիճակի տիրապետման և հաղթահարման միջոցների ու հնարավորությունների բացահայտումը, որը հրատապ է դարձնում սոցիալական կապիտալի կառուցվածքի առանձին բաղադրիչների ուսումնասիրությունը:

Սոցիալական կապիտալի բնույթը և հասարակական համակարգի գործառնության մեջ դրա կարևորությունը ուսումնասիրվել են դեռևս հնագույն ժամանակներից, և հետագայում սոցիալական համաձայնագրի հայեցակարգում մշակվել են փոխօգնության, փոխադարձ պարտավորվածության և վստահության հասկացությունները, որոնք սոցիալական կապիտալի հիմնական բաղադրատարրերն են: Ի դեպ՝ Յոսեֆ Կոնրադ և Լոկը սոցիալական շփման առաջնային ձև էին համարում բախումներն ու հակամարտությունները, գտնելով, որ բարիքի սահմանափակության պարագայում հավասարաչափ իրավունքներ և հավակնություններ ունեցող մարդիկ դատապարտված են գործելու «մարդը մարդուն գայլ է» սկզբունքով: Այս տեսակետը քննադատել է Ֆ. Ֆուկույաման: Նա գտնում է, որ մարդկային փոխհարաբերություններում որոշիչը ոչ թե բախումն է, այլ վստահությունը, որը, ըստ նրա, սոցիալական կապիտալի հիմնական բաղադրիչն է: Ըստ Ֆուկույամայի՝ սոցիալական կապիտալը երկու կամ ավելի անհատների միջև փոխազդեցության ոչ ձևական այն նորմերն են, որոնք առաջանում են վստահության հիման վրա<sup>6</sup>:

Այս բաղադրատարրի միջոցով է անհատը դիմակայում սոցիալական վախերին: Սոցիալական վախերն առաջանում են կենսաբանական վախերի հիման վրա, սակայն միշտ ունենում են հատուկ սոցիալական բաղադրատարր, որը երկրորդ պլան է մղում կենսաբանական գործոնները: Սոցիալական վախերի կոնկրետ ձևերը պայմանավորված են հասարակական կարգի, պատմական ժամանակաշրջանի առաձեռնահատկություններով: Սոցիալական վախերի հիմնարար ձևը պատասխանատվության հանդեպ ունեցած վախն է, որը գերազանցապես պայմանավորված է սոցիալական գործոններով: Պատասխանատվության հանդեպ վախը ձևավորում է սոցիոֆոբիայի մի ամբողջ շարք (վախ հաջողությունների և անհաջողությունների, միայնության, սոցիալական ռիսկերի հանդեպ և այլն): Քաղաքակիրթ աշխարհում որքան նվազում են կենսաբանական վախերը (բացահայտվում են բազմաթիվ հիվանդությունների հաղթահարման միջոցներ, անձի ֆիզիկական ամբողջությունն ապահովվելու մեխանիզմներ),

<sup>6</sup> Տե՛ս **F. Fukuyama**, Social Capital and civil society, The Institute fo Puplic Policy, Geirge Mason University, October 1, 1999 (<http://www.mf/orgexternal/pubs/fb/seminar/1999/reforms/fukuyama.html>):

այնքան աճում են սոցիալական վախերը: Այս տեսակետից սոցիալական միջավայրի և սոցիալական շփման հուսալիության ապահովման գործում սոցիալական կապիտալը կատարում է մարդկանց կյանքը կանոնակարգող և համախմբող գործառույթ:

Սոցիալական կապիտալը օգնում է հաղթահարելու այնպիսի սոցիալական ախտեր, ինչպիսիք են՝ նույնականության և ինքնության ճգնաժամերը: Պատմությանը հայտնի ամենածանր ճգնաժամերն առաջացել են բարոյական նորմերի ու արժեքների ոչ կենսունակության պայմաններում անհատական ես-ի և սոցիալական ես-ի (մենքի) միջև ծագած անհամաձայնությունից<sup>7</sup>: Սոցիալական կապիտալը իր բաղադրիչների, մասնավորապես, խմբային պատկանելության միջոցով նպաստում է նման ճգնաժամերի հաղթահարմանը: Խմբային պատկանելությունը դրսևորվում է խմբում անհատների վարքաձևերի միջև համաձայնեցվածությամբ, միջանձնային հարաբերություններում իշխող արժեքային կողմնորոշումների ներդաշնակությամբ՝ ապահովելով ես-ի ինտեգրումը: Քաղաքացիական արժեքներով առաջնորդվող հասարակություններում խմբային պատկանելությունը նպաստում է քաղաքացիական ինքնության դրսևորմանը: Ինքնության կառուցվածքում ընդունված է տարբերակել երկու մակարդակ՝ անհատական և սոցիալական: Անհատական մակարդակը անձնային բնութագրիչների հավաքածու է, որը տվյալ անհատին դարձնում է առանձնահատուկ, իսկ սոցիալական մակարդակը կապված է սոցիալական նորմերի և այն սոցիալական միջավայրում հարմարվելու, նույնացվելու հետ, որում ընդգրկված է անհատը<sup>8</sup>: Քաղաքացիական ինքնությունն այս կամ այն պետության քաղաքացիների՝ տվյալ հանրության պատկանելության գիտակցումն է: Քաղաքացիական ինքնությունը քաղաքացիական գիտակցության տարրերի վերապրումն է ռացիոնալ և իռացիոնալ մակարդակներում և ենթադրում է հանուն քաղաքացիական գաղափարների և սկզբունքների անհատի ռիսկի դիմելու պատրաստականություն: Այն իրենից ներկայացնում է վերանհատական գիտակցության ձև: Սոցիալական կապիտալն իր այս բաղադրիչի միջոցով անհատին հնարավորություն է տալիս դժվար և սոցիալական փորձով ոչ միշտ տրված միջավայրում ցուցաբերելու վստահություն: Քաղաքացիական ինքնությունը իմացական գիտելիք է (հասարակական կազմակերպությունների իրավական հիմքերի, քաղաքական-հասարակական երևույթների, իշխանության ընդունման ուղիների ճանաչողություն) կոնկրետ սոցիալական հանրության պատկանելության մասին, ինչպես նաև որոշակի արժեքային մոտեցում տվյալ պատկանելության փաստին:

Ժամանակակից աշխարհում զանգվածային տեղեկատվական միջոցների հեղափոխության, մշակութային տարրերի, արժեքների արագ փոփոխման հետևանքով մարդն ակամա ենթարկվում է փոփոխության, որը կարող է առաջացնել ինքնության ճգնաժամ: Ժամանակակից մարդը, ինչպես գրում է Ռ. Ջ. Լիֆտոնը, հարկադրված է անընդհատ փոխել իր ինք-

<sup>7</sup> Տե՛ս **Хелсе В.** Кризис индивидуальной и коллективной идентичности // «Вопросы философии», 1994, № 10, էջ 21:

<sup>8</sup> Տե՛ս **Труфанова Е. О.** Идентичность и Я // «Вопросы философии» 2008, № 6, էջ 95:

նությունը<sup>9</sup>: XXI դարի մարդն ի վիճակի է պահպանելու քաղաքացիական ինքնությունը, եթե միայն քաղաքացիական հասարակությունը՝ ի դեմս սոցիալական կապիտալի, իր մեխանիզմներով «գերության» մեջ պահի նրան: Ինքնության կորստից խուսափելու համար անհրաժեշտ է ուժեղացնել քաղաքացիական ինքնության գիտակցումը՝ որպես սոցիալական կապիտալի բաղադրիչ: Սոցիալական կապիտալի տարրերը անկապտելի են և դրանցից յուրաքանչյուրն ազդում է մյուսի շեշտվածության վրա: Քաղաքացիական ինքնության արժեքային կողմը ինքնահայեցողություն է դեպի հասարակաքաղաքական երևույթները: Քաղաքացիականությունն արժեքային նորմատիվ հասկացություն է, ի տարբերություն քաղաքացիության, որը իրավաքաղաքական կարգավիճակ է: Քաղաքացիականության հիմքը ոչ թե քաղաքականությունն է, այլ հոգևորն ու սոցիոմշակութայինը<sup>10</sup>: Քաղաքացիականության մեջ է ամրագրված քաղաքացիական դրիքորոշումը: Քաղաքացիական դիրքորոշումը ձևավորվում է իրավական գիտակցության հիման վրա, որն իրենից ներկայացնում է քաղաքական համակարգի սոցիալական արդարության մասին քաղաքացիների ունեցած պատկերացումների ամբողջություն: Քաղաքացիական դիրքորոշումը հետամուտ է համահասարակական նշանակության նորմերի միջոցով կոնֆլիկտներից խուսափելու գործընթացին: Ժամանակակից հասարակությունում անհնար է պատկերացնել տվյալ գործընթացի ապահովումը առանց սոցիալական կապիտալի: Այս տեսակետից ուշագրավ են նաև Ռ. Պատենեմի հայացքները: Նա սոցիալական կապիտալը բնորոշում է որպես սոցիալական նորմերի հանդեպ վստահության միջոցով առաջացած համագործակցություն: Պատենեմը սոցիալական կապիտալի հիմնական բնութագրիչներ է համարում անձի մասնակցությունը քաղաքական կուսակցությունների գործունեությանը, ներառվածությունը հասարակական կազմակերպություններում, մասնակցությունը կրոնական և քաղաքական արժեքների թարմացման, հասարակական շահերի, քաղաքացիական նորմերի և փոխօգնության սկզբունքների ձևավորման ու պահպանման գործընթացներին: Նման գործունեությունը զարգացնում է գործընկերների միջև փոխօգնության ոչ ձևային հարաբերություններ՝ այլասիրության և վստահության գաղափարներով<sup>11</sup>: Սոցիալական կապիտալի այս հատկությունը կարևորվում է այն տեսանկյունից, որ միջխմբային կոնֆլիկտներին դիմակայելու առումով սոցիալական համակարգին օժտում է բավարար ճկունությամբ: Նման բովանդակության շնորհիվ սոցիալական կապիտալը՝ ի դեմս սոցիալական համերաշխության բաղադրիչի, դառնում է նաև էթնիկ հանդուրժողականության աղբյուր և միջէթնիկական կոնֆլիկտների կարգավորման ուղիների որոնման արդյունավետ միջոց՝ իր բնույթով հիմք դնելով հանդուրժողականության և համագործակցության ձևավորմանը: Սոցիալական կապիտալը համագործակցություն է ապահովում ոչ միայն վերոհիշյալ հան-

<sup>9</sup> Տե՛ս **Lifton R. J.**, *The Protean Self, Human Resilience in an Age of Fragmentation*, New York, 1993:

<sup>10</sup> Տե՛ս **Է. Ա. Հարությունյան**, Քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրները անցումային հասարակությունում, Եր., 2003, էջ 10:

<sup>11</sup> Տե՛ս **R. Putnum**, *Bowling Alone: The Collapse and Revival of American Community*, New York, 2000:

րույթների, էթնիկ միավորումների մակարդակում, այլև հնարավորություն է տալիս անհատական մակարդակում դրսևորելու համագործակցություն:

Այս տեսակետից սոցիալական կապիտալի էությունը բացահայտել է Ջ. Կոուլմենը: Ըստ նրա՝ սոցիալական կապիտալը փոխադարձ վստահության, փոխօգնության ներուժ է, որը ձևավորվում է նպատակադիր միջանձնային հարաբերություններից առաջացած պարտավորություններով և սպասումներով: Համաձայն նրա, եթե մարդն ունի վստահության վրա հիմնված բազմաթիվ կապեր, ապա կարող է ցանկացած պահի այդ կապերը վերածել եկամուտի: Կոուլմենի հետևորդները սոցիալական կապիտալը դիտում են որպես անհատի որակ, որը տալիս է կենսական արժեքների ձեռքբերման, համագործակցության լուրջ առավելություն: Այս համատեքստում սոցիալական կապիտալը, էպես նպաստելով մարդկային կապիտալի արարմանը, հաղթահարում է արդի աշխարհի մարդաբանական ճգնաժամը: Կոուլմենը հատուկ ուշադրություն է դարձնում սոցիալական կառույցներին, որոնք սոցիալական կապիտալի կուտակման հարցում կատարում են աջակցի դեր<sup>12</sup>: Որքան բարձր է սոցիալական կապիտալի մակարդակը, այնքան մեծ են տնտեսական և մարդկային կապիտալի ստեղծման հնարավորությունները: Իսկ որքան անուր են սոցիալական կապերը, այնքան բարձր է սոցիալական կապիտալի մակարդակը:

Սոցիալական կապիտալի հիմք հանդիսացող սոցիալական կապերի, փոխհարաբերությունների ցանցը պատմական կամ սոցիալական տրվածություն չէ, այն անհատական և կոլեկտիվ ներդրումային ռազմավարության արդյունք է: Սոցիալական հարաբերությունները և դրանց երկարատևությունը կախված են գործողությունների երկու մակարդակից՝ առաջին՝ սուբյեկտիվ, որի մեջ ներառված են ինդիվիդի անհատական-բարոյական արժեքների հիման վրա առաջացած վարքանմուշներ, և երկրորդ՝ ինստիտուցիոնալ, որը դրսևորվում է իրավունքների ու օրենքների իմացությամբ և դրանց պատասխանատվորեն հետևելով: Այս ամենի հիմքում կարևոր գործոն է անձի սոցիալական ակտիվությունը, որի առանձնահատկությունը նպատակադրվածությունն է: Մի կողմից անձի սոցիալական ակտիվությունը դառնում է սոցիալական կապիտալի ձևավորման նախապայման, մյուս կողմից՝ սոցիալական կապիտալը նպաստում է անձի սոցիալական կարևորության և ակտիվության բարձրացմանը: Սոցիալական կարևորությունը հասարակական գործընթացների վրա ազդելու անձի ունակությունն է: Որքան մասշտաբային են քաղաքական նպատակները, այնքան կարևոր է քաղաքացու պատասխանատու, գիտակից և ակտիվ մասնակցությունը դրանց իրագործմանը: Այստեղ կարևորվում են ակտիվության օբյեկտիվ պայմանները և հնարավորությունները՝ որպես իրականությունը վերափոխող ակտիվ ու որոշիչ ուժեր<sup>13</sup>:

Քաղաքացիական հասարակություններում առկա սոցիալական կառույցների խնդիրն է ոչ թե արտաքին միջոցներով անձի սոցիալական ակ-

<sup>12</sup> St'ou Koulmen Dj. Капитал социальный и человеческий // «Общественные науки и современность», 2001, № 3, էջ 136:

<sup>13</sup> St'ou Lebedev B. K., Исторические формы социальных типов личности. Казань, 1977, էջ 56:

տիվության բարձրացումը, այլ գործունեության մեջ կամավոր ներառվող և գիտակցաբար ակտիվ գործողություններ ծավալող անձի դաստիարակությունը, այն է՝ քաղաքացիական որակների ձևավորումը: Քաղաքացիական որակներով օժտված հասարակական անդամը իրեն դրսևորում է հասարակության հորիզոնական կառույցներին, քաղաքական կուսակցությունների գործողություններին ցուցաբերած մասնակցությամբ, սա էլ իր հերթին չափելի է դարձնում սոցիալական կապիտալը: Մի շարք սոցիոլոգիական տեսություններ սոցիալական կապիտալի չափելիության հիմքը տեսնում են անհատի խմբային պատկանելության մեջ: Ինչպես նաև փաստում, որ մարդկանց միջև գործառնական կախվածության պայմաններում գործունեության մեջ անձանց ներառվածության աստիճանը թույլ է տալիս մոտավոր ձևով ճշգրտել սոցիալական կապիտալի տևականությունը և կայունությունը: Ինչքան կայուն և տևական է սոցիալական կապիտալը, այնքան մեծ է սոցիալական համակարգում անհատի ինքնահաստատման, ներուժի ինքնաիրացման հնարավորությունը և հասարակական բարիքի ապահովումը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկ է նշել, որ քաղաքացիական հասարակությունը ոչ միայն պիտի արարի սոցիալական կապիտալ, այլև սոցիալական այդ կապիտալը ճանաչի որպես իր հավաքական գոյության լավագույն եղանակ:

**КРИСТИНЕ ТАНАДЖЯН – Социальный капитал как механизм преодоления социокультурных травм.** – В статье рассматривается характер и свойства социального капитала. Выделяются различные научные подходы к нему, показана роль его компонентов при преодолении социальных травм, подчеркнута его значение для развития современного общества.

**KRISTINE TANAJYAN – Social Capital as a Mechanism for Overcoming Socio-Cultural Trauma.** – The article discusses the nature of social capital and social capital properties. The author shows the role of the components of social capital in overcoming the social traumas, outlines the importance of social capital for the development of modern society.